ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 4-ը քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային (ՔԿՃՄ) հարցերով ԵՄ Գերազանցության կենտրոններ նախաձեռնության կողից մշակված P106 ծրագրի բազմազգ տարածաշրջանային սեղանային և դաշտային հիմնական վարժանքներին մասնակցելու նպատակով Մոլդովա գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Տիգրան Մաղաքյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ցաւաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային սպասարկման և հսկողության թիվ 4 բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Մոլդովայի Հանրապետություն, ք.Ունգենի 2025թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 4-ը:

3. Հրավիրող կողմը՝

Քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային (ՔԿՃՄ) հարցերով ԵՄ Գերազանցության կենտրոններ ISEM ինստիտուտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր ISEM ինստիտուտի կողմից մշակված P106 ծրագրի սեղանային և դաշտային հիմնական մասնակցելը: Մինչ հիմնական վարժանքներին մասնակցելը՝ ամռանը Սլովակիայում ունեցել էինք նախապատրաստական պարապմունքներ:

Հանդիպման աշխատանքային լեզուն անգլերենն էր:

5. Քննարկված թեմաները՝

Վարժանքների շրջանակներում մանրամասն քննարկվել են հետևյալ թեմաները՝

1) Սահմանային անցման կետերում արտակարգ իրավիճակներում առաջին արձագանքման կարգը,

2) Սահմանային անցման կետերում ծառայություն իրականացնող տարբեր գերատեսչությունների համագործակցությունը,

3) Անհատական պաշտպանության սարքավորումներից օգտվելու, կիրառելու կարողությունները

4) Նմուշառման, փորձաքննության ենթարկելու ընթացքը,

5) Ախտահանում կատարելու ճիշտ կարգը:

Մասնակցություն եմ ունեցել բոլոր քննարկումներին, ցուցադրել եմ մեր պրակտիկայում կիրառվող գործիքակազմը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ելույթներ ունեցան Հայաստանի, Ալբանիայի, Ադրբեջանի, Մոլդովա՝ի, Մոնտենեգրոյի, Վրաստանի, Հյուսիսային Մակեդոնիայի, Բոսնիա և Հերցեգովինայի, Սերբիայի և Ուկրաինայի ներկայացուցիչները:

ISEM ինստիտուտի ներկայացուցիչները, որպես կազմակերպիչ լոռվ կատարեցին խմբերի բաշխումներ կապված մասնագիտական գիտելիքների և գործառույթների հետ:

Որպես ՀՀ ՊԵԿ ներկայացուցիչ կիսվեցի մեր փորձով՝ մասնավորապես, ՀՀ ԱԱԾ ՍՋ ծառայության հետ համատեղ իրականացվող միջոցառումների և ծառայությա՝ կազմակերպման սկզբունքների մասին:

Սեղանային վարժանքը տևեց մեկ օր, որից հետո ունեցանք մեկօրյա դաշտային պարապմունք, որից հետո էլ տեղի ունեցավ վերջնական վարժանքը՝ սցենարի դինամիկ փոփոխությամբ, որի մասին մենք՝ մասնակիցներս, տեղյակ չէինք:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Վարժանքների ավարտին Քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային (ՔԿՃՄ) հարցերով ԵՄ Գերազանցության կենտրոններ ISEM ինստիտուտի կողմից արժանացել եմ հավաստագրի՝ վարժանքների ամբողջական փուլերին հաջողությա՝ մասնակցելու կապակցությամբ:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջար-կները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն գործնականում համատեղել մաքսային, սահմանապահ, քաղպաշտպանության, առողջապահական, ինչպես նաև փորձագիտական ծառայությունների աշխատանքները արտակարգ իրավիճակներում:

Մշակված և մեզ ներկայացված սցենարից բացի, գլխավոր վարժանքի ընթացքում եղան փոփոխություններ, որոնք գործնականում ապացուցին, որ վերը նշված գերատեսչությունները կարող են բարձր մակարդակի վրա լուծել նմանատիպ խնդիրներ:

Այլ երկրների հետ փորձի փոխանակումը կնպաստի ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայության կարողությունների աճին՝ սահմանային անցման կետերում արտակարգ իրավիճակներին արձագանքելու մասով:

9.Ստորագրությունը, ամսաթիվը

08.10.2025թ.